հատուցին զտաւն սրբոց Վարդանանց յամէն ամի բոլոր եկեղեցիքս․ զպատարագն որչափ ես կենդանի եմ՝ վահրամայ և Թամարի անձին, և յետ վախճանի իմոյ՝ ինձ։

Արդ կատարիչք գրիս աւրհնին 'ի Քրիստոսէ․ Եւ հակառակքն որոշին․ զանէծս կայենի․ գյուդայի և զնեռինն ժառանգէ մարդ ո՛ր իցէ և մի՛ լիցի թողութիւն յաւիտեանս ամէն։

(Շ—ր—ն—ե—լ—է)։

---

# ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՑՕԼԱԿԵՐՏ, ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏ, ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ ԵՒ ԲԱԳԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՑՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ։

(Շարունակութիւն եւ վերջ։)

Առաւօտեանն շուտով գնացինք յուխտ սուրբ Գէորգ Եկեղեցին, որ այն Գաւառի ժողովրդոց նշանաւոր ուխտատեղին է և Բագարան գիւղի ժողովրդական Եկեղեցին, որև շինուած է նոյնպէս Պետրոս Կաթուղիկոսի և Յովհաննէս Թագաւորի միջոցին Փրկչական 1030 թուին։ Եկեղեցին բերդի հիւսիսային ծայրին շինած լինելով՝ գեղեցիկ տեսարան ցոյց կ'տայ տեսողաց․ վասն զի՝ բերդն բնական քարով շրջապատուած՝ շատ ամրութիւն ունի և բաւական տարածութիւն՝ երկայնութեամբ հիւսիսից ցհարաւ․ որոյ մէջ 250 գերդաստան կ'պարունակուի․ այսինքն է 1000 կամ 1500 զինուորի բնակարան եղած կըլինի․ որոյ կասկածելի կողմերն ամրացուցած է բարձր և ահագին պարսպօք՝ որբատաշ քարով և կրով որպէս և հարաւային ծայրի պարիսպն դեռ նոյնութեամբ կանգնած մնացած է։ Հիւսիսային ծայրումն, ուր Եկեղեցին է, կ'երևէր տեղի ջրոյ աւազանի և ծածուկ գետնափոր ճանապարհ, որով իջել էին Ախուրեան գետոյ վերայ և այն տեղից 50 կամ աւելի աստիճանօք ջուր առել և հանել բերդի մէջը, ինչպէս Երնջակայ բերդն և Վայոց-Ձորոյ Հրաչէբերդն որ Սեւբերդ եւս ասի․ որոյ համար Օրբելեանց Ստեփաննոս պատմագիր Եպիսկոպոսն գրելով՝ Աստուածաշէն բերդ կ'անուանէ։ Քաղաքի բնակչաց տներն ու կրպակներն, ու փողոցներն և ամենայն շինուածքներն բերդի արևելեան կողմն են, զարձեալ մեծամեծ քարով պարսպած․ որ միայն 3 մեծ դրանց տեղն են երևում, միոյն դէպ 'ի արևելք, —որոյ մօտէ կ'տեսանգուն մեծ Եկեղեցին առանց արձանագրոյ —, Երկրորդ Դուռն, դէպ 'ի արևմուտք, —որ բերդի միւս կողմի ձորին է նայում —, խոկ 3րդն դէպ 'ի հարաւ, —որ տանի 'ի գետն —, որոց վերայ, նոյնպէս և բերդի մեծամեծ քարերի և անտաշ քարափների վերայ, շատ ու շատ նայելով չ'կարացինք գտանել մի նշանաւոր գրոյ անգամ․ միայն Խորենացւոյ պատմութեան ցուցմամբն կ'իմանայինք, որ Երուանդ Բ, Թագաւորն շինելով այս բերդն ու քաղաքն՝ փոխադրեց այս տեղ Արմաւիր քաղաքի մէջ պահած Հայաստանի նշանաւոր Կռքերն, և Քրմապետ կարգեց իւր եղբայր Երուազին*․ զորս Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն խորտակեց, մանրեց և անհետացրեց․ որոց փոխարէնն կանգնեց Ամենազօր սուրբ Խաչի նշանն, ուր յետոյ որպէս 'ի շինուածոցն երևի, յաւուրս յիշեալ Պետրոս Կաթուղիկոսի և Բագրատունի Յովհաննէս Թագաւորին՝ Իշխանք Անւոյ շինեցին Եկեղեցի յանուն սուրբ Խաչին, որ երկրորդ նորոգութեամբ անուանել են սուրբ Գէորգ, որն ինչպէս վերն ասացի՝ այժմ նշանաւոր ուխտատեղին է գաւառին։ Խորենացւոյ պատմութիւնից կ'իմանայինք, որ երբ Արտաշէս հզօր զօրութեամբ Պարսկաստանից՝ Պարսկական և Հայկական զօրօք յարձակեցաւ Երուանդայ վերայ Թագաւորութիւնն առնելոյ համար, որ յանիրաւի տիրապետել էր Երուանդ, քանդեց, աւերեց, որպէս Երուանդակերտն, Երուանդաշատն նոյնպէս և այս Բագարանն, ուր և սպանեց Երուանդին և նորա եղբայր Երուազ քրմապետին, որ Բագարանի Աստուածոց յառաջ կանգնած սպիտակազգեստ և բազկատարած կ'աղօթէր Երուանդայ կենաց և Թագաւորութեան համար։

․ ․ ․ ․ ․ ․ Մի օր ևս Բագարան մնալով՝ որքան նշանաւոր շինուածք կար թէ և կիսակործան, կրկին և կրկին անգամ տեսնելով, նոյնպէս և բերդի վերայ եղածներն և դրանց մեծ մեծ քարերն և գետոյ միւս կողմի բլրի վերայ շինած սուրբ Շուշան անուանով գեղեցկաշէն մատուռն, (որոյ շինող Շուշան Արքայուհւոյ, կամ ըստ աւանդութեան բնակչաց Բագարանայ՝ կրօնաւորուհւոյ համար, վաղուց արդէն աւանդութեամբ մնացած է Հայոց Եզ-

---

*) Խոր. Բ. Խ.

գի մէջ ցայսօր առածը թէ Մինչև Շուշանը Ղուրղուրան, ժամանը կեչմիշ, վերադարձանք նոյն խակ մեր գնացած ճանապարհովն՝ դարձեալ ի Կողբ գիւղաքաղաքն. և քանի օր ևս մեր պաշտօնական գործերովն և մանաւանդ Եկեղեցական գպրոցի հաստատութեան և բարեկարգութեան կարգադրութեամբն պարապելով՝ գնացինք դէպ 'ի Աքմա-կէօլ անուանեալ Հայաբնակ գիւղն, որոյ ճանապարհի վերայ տեսինք նորաշէն ածխահանքը, որ շնորհիւ մեծապատիւ Մկրտիչ Պէյի Ռէֆիքեան յայտնուած էր և նորա տնօրէնութեամբն և ծախքովն այժմ խակ աշխատաւորքն կ'պարապէին վրան՝ փորելով, որոյ ածուխն ըստ վկայութեան փորձառուաց, նոյնպէս և կառավարչիկի և կապալառուի Աղաճանեան Կողբայ, շատ ընտիր և պատուական տեսակէն է։ ՑԱքմա-կէօլ գործերս աւարտելուց զկնի՝ գնացինք Բուլաղ-կէօլ անուանեալ լիճը ('ի հնումն Գայլատու լիճ) տեսնելոյ, որ Ռուսաց և Օսմանցւոց սահմանագլուխն է. որոյ արևմտեան կողմի եզերքումն, որ Ռուսաց կողմն է, կայ մի փոքրիկ կղզեակ, որոյ մէջ կ'երևին շինութեանց նշմարանք, և եկեղեցւոյ որմունք՝ խաչքարերով զարդարուած, Քրիստոնէութեան առաջին դարերի գործ։ Այս լիճը երկայնութեամբ և լայնութեամբ կարելի է, որ Սևանայ ծովի քառորդ մասին չափ հաւասարի. և ունի բաւական համեղ ձկունք՝ Գեղարքունեաց, Իշխան և Կողակ ձկանց նման. որ ըստ աւանդութեան բնակչաց երկրիս, չըկլին այս տեղ Սևանիցն բերելով՝ Կողբայ հասարակութիւնքն՝ հրամանաւ Երևանայ Պարսկական Կուսակալաց (Սարտար)։ Զուարճանալով լճիս տեսութեամբն՝ վերադարձանք Երուանդակերտ քաղաքն, այժմ Դարա-ղալա անուանեալ (այսինքն Ձոր-բերդ), որ ըստ պատմութեան Խորենացւոյն շինել է նոյնպէս Երուանդ Բ. Երասխի հարաւային եզերքին՝ ամուր և բարձր պարսպօք և աշտարակօք, հանդէպ Արմաւրայ դաշտին և բերդին, որ ցարդ ևս բաւական բարձրութեամբ երևին դեռ կես աւեր ճանապարհի հեռաւորութեամբ անցանողաց։ Բերդի շինութիւնն շրջապատեր է մի կողմից Երասխն. խակ միւս կողմերից Խորափոր ձորն, որ երբեմն կարելի է Երասխի գնացքի տեղն եղած լինի և այժմ Կողբայ լերանց հեղեղատներ անցք. բերդի մէջի ընդարձակութիւնն՝ Երևանայ բերդի ընդարձակութեան չափ կ'լինի. խակ քաղաքի տարածութիւնն՝ Աղէքսանդրապօլ քաղաքի չափ. որոյ գործածական ջուրն եկեր է Ալագեազ-կէօլի աղբիւրներէն և Կողբայ լերանց առուակներէն և բաւական այգիք է պատրաստել բնակչաց համար, ինչպէս ցայսօր այգեաց որմունքն և հնձաններն ցոյց կ'տան։ Բերդի մէջի շինութիւնքն արդարև Արքայավայել մեծագործութիւնք են։ Այս բերդի շինուածոց և պարսպաց վերայ ևս շատ ու շատ որոնելուց զկնի՝ չկարացինք գրուածոց նշան գտնել. ուստի և գնացինք Սուրմարի անուանեալ բերդն տեսնելոյ, որ Երուանդակերտի բերդի հանդէպն է՝ արևմտեան կողմից՝ նոյնպէս Երասխայ հարաւային բարձրաշէր ափանց վերայ, որոյ անունովն և այժմ Երասխաձոր և Արշարունեաց գաւառներն կ'անուանին Սուրմարւոյ գաւառ, որ ըստ աւանդութեանն՝ Կողբացի սուրբ Մարտիրոս նահատակի անուամբն է յիշվում, որ ըստ Չամչեան պատմութեան Հատ. Գ. երես 422. յամի Տեառն 1387, նահատակեցաւ Սահաթ անուն այլազգի անօրէն իշխանէն*. որոյ անուամբն և այժմ Այլազգիքն Սուրմարւոյ գաւառին՝ Սահաթլի կոչեն**, բայց ըստ Խորենացւոյն՝ Արտաշիսի անուանակոչութենէն, որ Երուանդակերտին՝ Մարմէտ, այսինքն Մարք (Քրդի) քաղաք՝ Երուանդին անպատուելոյ համար անուանեց, որ չեն է եղել 1387 թուին նոյնպիսի անուամբ։ Այս բերդը տեսնելով և արձանագրութեան մասին անբաւական մնալով վերադարձանք դէպ 'ի Մասսի ստորոտը և գնալով 5 ժամու չափ՝ հասանք Իգտիր գիւղն. ուր մի քանի օր պարապելով Եկեղեցական կարգադրութեամբ և մանաւանդ Դըպրոցի բարեկարգութեամբն՝ հոգացինք որքան մեր հոգեկան ուժն և մարմնական կարողութիւնն ներէցին՝ Դպրոցի ներքին և արտաքին կառավարութեանց համար. աշխատեցինք մինչև, որ Դպրոցն ըստ նորոգ պայմանագրութեանն համայն ժողովրդոց Իգտիրու՝ ստանայ 'ի տարին 1000 մանէթի չափ տարեկան դրամուոր եկամուտ՝ զանազան աղբիւրներից՝ այնէ՝ գինեվաճառութեան և մսավաճառութեան և այլ ամենայն բան վաճառող կըրպակներից, գիւղական կշռորդից (Դընկար). և

*) Չամչեան. Պատ. Բ. 922. և Գ. 421։

**) Սարգ. Շահխաթ. Նեանց Բ. 58։

ամենայն կարգի և աստիճանի արհեստաւորներից, նա և տոկոսիքն Եկեղեցական գումարի, որէ 1300 մանէթ, որպէս արդէն անցեալ տարի Քանաքեռցիք ձայնաձայնեցան և պայմանագրեցին, ինչպէս՝ Արարատ պատուական լրագրի միջոցաւ հրատարակուեց(1). Վերջապէս աշխատեցինք որ Արժանա. Հմայեակ Վարդապետի Արշարունեաց երկամեայ վաստակը զուր չհամարուի ժողովրդեան աչքին, որ ճնշելով իւր անձը՝ ամենայն ջերմեռանդութեամբ կ'աշխատի ձրիապէս ուսուցանել իւր Հայրենակից որդւոց՝ Կրօնագիտութիւն և Ազգային պատմութիւն, որքան կ'ներէ Եկեղեցական Դպրոցի կանոնն(2). որ ըստ հարցաքննութեանս ոչ սակաւ աշխատութեան պտուղ տեսի այն Դպրոցի Աշակերտաց մօտ. Դպրոցական կառավարութիւնն հոգալուց և ապահովելուց զկնի, և Եկեղեցական եկամտից հաշիւն տեսնելուց և կարգադրելուց զկնի՝ գնացինք Տաշբուռուն անուանեալ 125 տուն Հայաբնակ գիւղն, որ Շահխաթունեանց Երջանկայիշատակ Յովհաննէս Եպիսկոպոսն՝ իւր ստորագրութեան մէջն Քարափլի կ'անուանէ(3). որ Մասից հեղեղատի նման յառաջացած՝ կուտակ կուտակ բլրոյ վերջացած տեղումն է։

Տաշբուռունից գնացինք Ղարաղոյլին անուանեալ Պարսկական գիւղի հանդէպ՝ Յօղակերտ հին և իսպառ աւերակ դարձած քաղաքն, որ Մասի ստորոտից փոքր ինչ դէպ 'ի Երասխն երկայնացած բլրակի վերայ է շինած. Ըստ Խորենացւոյն(4), սա պէտք է լինի Յօղակերտն աւան՝ տունն բնակութեան Յօղակայ որդւոյ Սմբատայ. ըստ որում Արմաւիր Քաղաքից ուղղակի դէպ 'ի արևելեան հարաւ անկանի, և շինուածոց մեծ մեծ կռած կոփած Արմաւիրեան բերդի շինութեան կարծր և սևագոյն քարերի նման՝ պարզապէս ցոյց են տալի, որ Արմաւիրայ դեռ մի դար ևս յառաջ շինուած է։

Այս Յօղակերտայ բերդի մօտ մի մեծադիր քարի երեսի վերայ, որ տաշած, սրբած է և փոքր ինչ խորացրած անձրևից պահպանելոյ համար, գտինք Արմաւիրեան նոյն իսկ բևեռագրոց նման մի արձանագիր 24 տողից բաղկացած՝ տարածուած քարի երեսին 2 Հայի գազ երկայնութեամբ և մի և կէս գազ լայնութեամբ. Բերդի հնութիւնից և արձանագրոյ ձևից երևի, որ դարձեալ Արայի և Շամիրամայ ժամանակի գրուածք է. ուստի և նոյնպէս անհասկանալի առ այժմ մեզ. և որպէս զի այս անյայտ չմնայ այժմեան ուսումնականներից, և գուցէ Արմաւիրեան տառերի վերայ աշխատաւորին հարկաւորի ևս այս արձանագրոյ տառերն, օրինակեցի միմիայն առաջին և վերջին այսինքն 1րդ և 24րդ տողերն, որ ըստ կարծեացս և ըստ արձանագրութեան կարգին. պէտք է ժամանակի թուականն լինի, ինչպէս միշտ կ'պատահի առաջին և վերջին տողերի մէջ. իսկ ամբողջ արձանագրութեան օրինակելն յանձնեցի Արժանապատիւ Արշարունի Հմայեակ վարդապետին, որ հանդարտ և պարապ միջոցում կարողանայ օրինակել, և ըստ պահանջման հարկին ուղարկել Արարատ լրագրի Խմբագրութեանդ, տպագրութեամբ հրատարակելոյ համար, ըստ որում մեզ սաստիկ անձրևն չներեց երկար մնալով օրինակել. Եւ ինչպէս պատմեցին Տաշբուռունցի Քահանայք և Ղարաղոյլնեցի Տանուտէրք՝ քանիցս անգամ այլ և այլ լեզուագէտ մարդիկ՝ Ռուս, Գաղղիացի և այլ ազգերից օրինակել են, որոց համար դեռ ոչ մի լրագրի մէջ կ'երևին տեղեկութիւնք։ Այսպէս շրջագայելով և տեսնելով նա և Փառախոտ և Արշակաւան հին հին քաղաքների աւերակներն, որոց այժմ բնակիչք գաւառին Դօրգուն և Քէօհնա — Քալա կանուանեն Պարսկերէն, և մեր վիճակային գործերն աւարտելով՝ վերադարձանք յԵրևան։

Մեսրոպ Վարդապետ Սմբատեանց

Դեկտ. 1869 ամ.

յԵրևան

1) Արարատ Ամսագ. 1869 մարտ. Թիւ Գ.Ա. երես 156։
2) Արարատ Ամսագիր 1868 Հոկ. Թիւ Զ. երես 70։
3) Ստոր. Շահխաթունեանց, Հատ. Բ. երես 6։
4) Խորեն. պատմ. Ա. ժբ.

## ԱԶԳԱՅԻՆ

Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեցաւ հաստատել օրհնութեան Կոնդակաւ՝ Գառնւոյ գաւառին մէջ՝ ազգասէր ջանիւք Արժանապատիւ Մեսրոպ Վարդապետի Սմբատեանց՝ փոխ-թեմակալին Երևանոյ՝ հո-